

ԳՐԱԽՈՍՔԻ ԹԻՒՆ

«ԵՎՀԵՇԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻ ՎԱՐԴԱՆԻ և Հայոց պատերազմի համար»
Թարգմանեց Հ. ՊՈԽԱՎԵՍՅԱՅ Թիվիս, 1891 թ.:

Ապա դրբի մասին թէպէս գրման
քննութիւններ մեր պարբերա-
կան մասուցի մէջ¹⁾, բաց մնաք ա-
մելորդ չենք համարաւմ մի քանի խօսք
առ նվիրել նրան, որի կարծուր նշա-
նակութիւնն առնեն մի հայ ըմբռնուամ
է, ուրիշն և տեղի գէտք է հնասա-
քըքիք բանասէրներին նորա ամելի
կամ պակաս լաջողութիւնը։

Գրաբարից մի ընտիր մատնա-
գիր աշխարհաբար թարգմանելը ներ-
կարսման աւելի գետք է, քան ուրա-
նից 30—40 ապրի առաջ չը նոտե-
լով որ գրաբարի գիտութիւնը անհա-
մոնակ զարգացել է այս ժամանակա-
միջոցուամ, տպած են բաւական թափ-
հետազոտութիւններ, ձեռնարկներ,
բառարաններ, որոնք նպաստում են
այդ լեզուն լաւ ուսումնասիրելու, ու-
րեմն և լաւ հասկանալու և թարգ-
մանելու թանը նորանուան է, որ
առաջ գրաբարի ուսումնասիրաւթիւնը
գիտական ճիշդի վերաբ դրամ

չէր, ճիշդ որոշած չէին բառերի
սկզբնական նշանակութիւնները, բա-
ցարսած չէին լեզվի գրաւթիւնն ու
լատակութիւնները իւրաքանչիւր դա-
րսում և առանձին իւրաքանչիւր մա-
տինաղրի մէջ. զիտական քննութեան
չէր հնթարկւած լեզուն իւր բազմա-
հասակ երևովներով, մատնապիրն
իւր բավանգակութեան, լեզվի ու ոնի
կողմից, առնեն մի խօսք անխսալ էր
համարուամ, առնեն մի լեզուավին երևութ-
ուրագուամ, որ պէտք էր ընդունել և
գործածել. Այս գրաւթեան մէջ՝ ուս-
մանափակ էր գրաբար լեզուն ուսում-
նասիրողի հորիզոնը, և վերի վերոց
և կիտակատար՝ այդ լեզվի հասկա-
ցուաթիւնը. Այն ժամանակ զիւրին
էր թարգմանել, որովհետեւ բաւակա-
նանում էին թարգմանութիւնն ար-
տաքուստ նուան և համապատաս-
խան անելու ընազրին, իսկ թէ ներ-
գուստ ինչպիսի մնի տարբերու-
թիւններ կադին երկաւի մէջ՝ այդ
ոչ թարգմանիչը կարող էր հասկա-
նալ և ոչ ընթերցովը, որովհետեւ գրա-
բարի ուսումնասիրութիւնը լեզվ

1) «Մաքան 1891 թ. Կոյեմքներ, Կոյո-
դար 1891 թ. № 26

արտաքին ձեռքից առաջ չէր զնացել, այն էլ սահմանափակ, երկիւղածքարհաշութեամբ — անխորի, առանց քննութեան իւրացնելով եղածը և գործածելով.

Ակմ գրաքարի ուսումնասիրութիւնը շատ առելի առաջ է զնացել, քննական սպին, որ ամեն բառաջազմութեան պարմանն է մոել է ալդ լեզվի մէջ. համեմատական լիդապիտութիւնն ու բանասիրութիւնը մի կողմից, մասնագիրների լուրջ ու գիտական ոճով ուսումնասիրութիւնը միւս կողմից՝ շատ նոր երեսլիներ բաց արին այս լեզվի մէջ. շատ բան, որ առաջ չէր նկատուամ սկսաւ հետզհատէ երեան գալ, ընդհակառակն շատ նշանաւոր երեսլիներ, որ կոթողի նման հաստատ և անխօնուած էրն հանեարսուամ կործանեցան. Ընդպարձակնեց մեր հափացքը ալդ լեզվի վերապ. մենք համոզւեցանք, որ մինչև ալժմ շատ թերի էր մեր գիտութիւնն ու հասկացութիւնը, և թէ ալդ լիզաւն կասարելապէս գիտնալու և հասկանալու համար հարկաւոր է նոր ի նորու սկսել սալորել.

Մենք ակմ այն դրութեան ենք, որ կարող ենք ասել՝ ոգակ դիտեմ զիսինչ զիսինմու Ռւասի ալժմ ան՝ համեմատ դժմար է գրաքարից թարգմանել, քան առաջ. առաջ չէին էլ տարակուասմ, թէ իրանց հասկացածից սարբեր բան կարելի է հասկանալ, մի խօսքից. ալժմ հասկանաւ անհանդան է պարագանալու համար հարկաւոր է նոր ի նորու սկսել սալորել.

Ակս կարձառաստ ակնարկը գրաքարի ուսումնասիրութեան հին և նոր

դրավենան վերակ կարենոր էր պ. Ղակասեանցի թարգմանութեան պարզ և սպիտ զնահասութեան համար Ակո թարգմանութիւնը եթէ 30 տարի առաջ գուրս եկած լինէր՝ շատ լավող պիտի համարւէր, որովհետև ամելի քան համապատասխանուամ է լեզվի գիտաթեան ար ժամանակաւու դրութեան, իսկ ներկալսւմ՝ հազիւ մասուկի առակից զուրս եկած՝ նա հին է, չէ համապատասխանուամ այն պարմաններին, որ մենք իրաւունք ունինք պահանջնել նղիչէի ալժման թարգմանութիւնից, մէկ խօսքով՝ գոհացիչ չէ. Ցիրտվի թարգմանիչը, մի քանի պարսկերէն բառեր և զենդական կրօնի վերտրերեւու անդեր պարզաբանելու համար օգտել է գիտական ողբիւրներից, մասնաւորապէս հանգուցեալ Ք. Պատկանեանի Հարցը ըստարանի նիւթերիցու. բայց այս ամենաքիչն է միան արել թարգմանիչը. Ամենազլիստորները — ուսումնասիրներ համբէն բազմաթիւ բառերի նշանակութեան ե. Կարսու, ուսումնասիրներ մասնագիրը մանրամասնարու և պարզ ըմբռնել նարու իմասան — դժբաղդաբար տիւ չէ արել նա. և այս պատճառուավ շատ անզամ աճանդի, անխօնա, հակասական մինչև իսկ անհասկանալի խօսքեր են պատօնուամ այս թարգմանութեան մէջ.

Երբե ապացոյց մեր ասածին քննենք գրքի հէնց սկզբից մի քանի կտորներ (Երես 9).

Բնագիր. Անղիչէի պատճութիւն վասն Վարդանակ և Հարց պատերազմինու.

Թարգմանութիւն. Անղիչէի պատ-

մութիւնը Վարդանի և Հաւոց պատերազմի համարու.

Մէկի կոտ մի բանի համար պատասխանիւնը գրել՝ նշանակում է գրել պատասխանիւնը աղջ անձի կամ աւատքափ օգտին, նպաստակ ունենալ, որ պատամաթիւնը աղջ անձը կարուաւ, կամ որ ինքն իւր պատամաթեամբ հառնի աղջ բանին, նղիչէն պատամաթիւնը գրել է Սամիկոն և ան Դաւուիթ երէցի համար, բայց ոչ մասած Վարդանի. նա գրել է Վարդանի և Հաւոց պատերազմի մասին.

Բնագիր. «Բանն զոր պատվիրեցիր՝ արարի, ովք քաջու»

Թարգմ. «Ինչ որ պատվիրեցիր՝ կատարեցի, ովք քաջու»

Ըստ Երեսլին ճիշտ, մինչև իսկ լաւ թարգմանութիւն է, բայց իրապէս շատ և շատ թող ու պակասաւոր թան բառը ե, գարում երբեք չէ նշանակում բան արժման նշանակութեամբ—ինչ բան որ պատվիրեցիր, ինչ որ պատվիրեցիր թան հին լիզամ նշանակում է բանտկառութիւն և բառերով արտակարած միաբար, մի խօսքից սկսմալ մինչև մի ամբազլ շարագրութիւն,

Ուրիշ անգիր թարգմանիչը սովոր է հասկացել այս բառը, իսկ այսանդ մոլորդի և աշխարհաբարի և գրաբարի արտնն զորյ և այն բանը որո դարձւած քնների արտաքին նմանաթեան որածաւուի. Բայց բառեկան է վիշել աջ բանն առաջին (զոր) արտրի վասն ամենաէնից նախաղասաւթիւնը (Գործք. Ա. 1), — առաջին շտրագրաւթիւնը (ապսինքն Ղաւկասաւ Աւատրանը) ևս զորեցի այն ամեն անի մոռին ։ համոզւելու համար, որ

ներկալ դէպքում ևս բան պէտք է վերցնել իւր սկզբնական նշանակութեամբ, որ միակ ուղիղն է,

Քաջ բառը թարգմանութեան մէջ ապարօինակ է, Ծնթերցողը կարծում է, թէ նղիչէն ուրիշ սր և է կոչում չէ գտնել Մտոմիկոնեան Դաւիթ երէցի, հոգեսրական մի անձի համար, բայց քաջ բառից, որ մարմնի ովք և սրտի անգիներութիւն է նշանակում, որտնք բարձար չեն հսկութական անձին տիտղոս լինելու, այն էլ ձարտասան նղիչէի բերանաւմ, Քաջ բառը գրաբարում, բայցի ալֆենան նշանակութիւնից՝ ունի և մի սովոր նշանակութիւն — դիւցազնական ծագում ունեցող, ոգի Անշուշա այս նշանակութիւնը հարկաւոր է վերցնել վերակիւնալ խօսքում և այն ժամանակ կը տեսնենք, որ հանճարեղ մատենադիրը քաղաքավարութեամբ ակնարկում է Դաւիթ երէցի իշխանական (Մամիկոնեան) ծագումին, Ուրեմն մեր բերած հատածքը պէտք է մօտաւարապէս թարգմանում լինէր պատպէս.

Ես պատրաստեցի այն շաբագր ու թիւնը, որ զու ինձ պատվիրեցիր, ով աղնւական կամ իշխանագն»:

Բնագիր սկսաւմ բազումք առաջինացն քան զստկաւու:

Թարգմ. «Սորի մէջ շտա շտա բն առաքին այց այց այց այց»

«Եսա շտաներն ասելու համար նղիչէն կը զործածէր՝ բազամք տքէ, կարի բազումք, ալսվք, լսրդազանք և ազն, և վերջապէս՝ չէր տոի բազումք առաքինացը քան դսակաւու, առաք առաքի առաքի, առ զոնէ՝ բազումք առաքի»

նացան քան (թէ) սակաւքու Ակտեղ ուրիմն մատենագիրն ուրիշ բան է ուղում ասել. կամ ան, թէ շատերը (Հաւատուանի հաւատացեալ ժողովուրդը) քչերից (ուրացեալներից) առաջինի հանդիսացան, ուրիմն մեծամասնութիւնը փոքրամասնութիւնից առաջինի դուրս եկաւ—կամ թէ սակաւք բառի տակ համկանալով ան սակաւքին նահատակներին, որոնք հաւատքի համար մեռնելով կատարեալ լողթանակ են տանում՝ մատենագիրն ուղում է ասել, թէ ազդպիսի սոկաւտրներից ամելի առաջինացաւ մնեց բազմութիւն, ուրիմն թէ Հարց պատերազմում բազմաթիւ մարդիկ ամելի առաջինի հանդիսացանքան սոկաւտրիւ ընտիր նահատակները, Դուցէ ապ խօսքն ուրիշ տեսակ էլ բացատրի. լամենան դէպս ալճ չէ նշանակում, ինչպէս որ թարգմանել է ոյ. Պուկասեանցը,

Բնագիր. «Նշան ադրեցի լալս եւին նշանակիսու

Թարգմ. «Նշանագրիցի ապ եօթն դլավոների մէջու»

«Նշանագիր դրաբարում լոկ նշանակում է գիր ուրիմն նշանագրել պիտք է նշանակէ գրել և ոչ նշանագրել սրովնետն ապ վերջին բառն աշխարհաբարսամ ուրիշ նշանակութիւն ունի—գրալմանական նշաններով նշանակել»

Բնագիր. «Զիրացն պատահում լինաւնէն արևելիցուցու»

Թարգմ. «Արեեւելեան իշխանից պատահան ած գործերը»

Արեեւելեան իշխան խիսու թալէ արեեւետն իշխան հարսող է նշանակել կամ արեեւետն արևելցի իշխան կամ Ա-

րեեւետում իշխանութիւն ունեցող երկու զէպքում ևս կարող էին շատ արեեւետն իշխաններ լինել. մատենագիրն ասում է՝ Արեեւելքի իշխան, ալպինքն Արեեւերի վերալ իշխան, որի հարիկ շատ ամելի սպիդ է և լարմարում է աշխարհասասան Յաղկերս արքալից-արքալին, որի առաջ դուրս էր նորն իսկ Բիւզանդիոնը»

Ակտեղ ևս թարգմանիչն նետել է սովորական ձերն—դրաբարի լատկացոցին աշխարհաբարում ածակունով է արտապատել որ ուրիշ անդ թէպէտ կարելի է, բայց աստեղ ալլալում է մատենագրի միտքը»

«Պատահած գործերը թարգմանելով մննք մատենագրին հակառակութեան մէջ կը ձգենք. միթէ միան երկրորդ գլխում է նու պատում Արեեւերի իշխանից պատահած դէպքերը. ապա հինգերարդ գլխում պատմած առքենցուց լարձակումը, եօթներարդում նկարագրութեան պատուիւթեան գործերի շարանակութիւնը», վեցերարդի վերջում թարգաւորի հրատարակած ներումը—միթէ սոքա և նորն իշխանից պատահած գործեր չեն. «Պատահումն բառը թարգմանիչը վերցրել է ալժմեան նշանակութեամբ, մինչդեռ գրաբարում նախիսս սահմանափակ նշանակութիւն և միանւագութեան գաղափարը պարագանելով. Վերովիշեալ խօսքն ուրիմն պէտք էր թարգմանել գոնէ ապաէն»

Գործի սկզբն աւորութիւնը Արեեւելքի իշխանի կողմից»

Ցաջորդ երեսում (10) ալքի է ընկնում մածաւանգ մի նախադասութիւն, որ սխալ թարգմանած լինել.

ըստ՝ կորցամբ է ոչ միայն ամերող՝ պարբերութեան, բայց և զրմթէ ամբողջ ընծագականի խմասար թարդմանութեան մէջ, որպէսուե ազդ նախադասութիւնը, որ ծառապուռ է իր-

ի կոսպ նախիւնթեաց և հետեւոք խօսքի մէջ խպում է, որպէս և խաղարշում է խմասար տրամաբանական հետեւողականութիւնը:

Բնագիրն ունի. Ավազ զաւ, ով մեծ ի զիտութեանն Աստուծու, առ ինչ արգեւք հրամափացիս, քան և թէ հրամաւեցիս լաւագունացը ըն. Որպէս երեխ ինձ... երկնաւոր սիրու է ի քեզ ար նշանակի, և ոչ երկրաւոր փառափիրութեանու:

Մատենագիրն հարցնում է Դափիթ երեցին, թէ զաւ որ մեծ են աստածալին զիտութեան մէջ ինչու համար արգեւք ինձ հրամափացիր ազագիրը շարադրել քանի որ ինքդ անքան հմաս ևս, որ կարող ես հրամաններ ընդունել՝ լաւագուն երկուսիրութիւններ անհլու¹⁾: Եւր աւած հարցմունքին դրասախանում է ինքը մատենագիրը—ոտ նշան է քո մէջ եղած երկնալին օիլուն և ոչ թէ երկրաւոր փառափիրութեան: Որից վատուսիրու մատեն նշանակութիւնը՝ բացարիմ:

1) Բնագրի այս հաւաւածը քերականացին պարզ չէ. բացի վերը բերւոծ պատճառքանութիւնից նու կորու է և այլուր, ո հասկացել. ինչու համար արգեւքին է հրամայեցիր, եթէ ոչ որպէսուե դու կրաման ես ստացել, լաւագոյնների մատեն, (այսինքն սիրելու ընկերին, ինչաքչ վենելու և այլն): Եւ ինձ երեւում է, որ առ յերաւու, նշան է երկնալին սիրուն, որ զանւում է քո մէջ, և ոչ (թէ երկրաւոր փառափիրութեան):

ազդ երկնալին ուրիշ քաջալիրմալով ինքը մոռածում է իւր ակարաւթիւնը և լոնձն է ասծում արւած պատմէրը. Այս հասւածը ոք. Դոմիասեան թարգմանել է.

«Բաց զու ով ով մեծդ Աստուծալին զիտութեան մէջ. ինչ ողատւէ թէ արդ եօք, որ տալիս եօ ինձ կատարելու առ տնշուշտ լաւագուն պատաւէ թէ թէ (?)». Աւ ինչպէս երմաս է ինձ... ոչ թէ երկրաւոր փառափիրութիւն, ալլ երկնաւոր սիրունշան է ապօ քեղանում:

Հարկ չը կատ բացտարմաւ, որ թարգմանութեան մէջ նօտրագրաւոր հասւածը չէ կապում լաջորդ մասին հետ, աերինուոր ուրիլու մէջ է ընկնում լանգտուրատալից, շինովի կերպավ, մինչդեռ բնագրի մէջ նու բնականաբար գալիս է, Բնագիրը գեղեցիկ իմաստ է պարունակում, որի մէջ միտք մաքի հետ շղթալու են բնական կերպավ, իսկ թարգմանութեան մէջ մաքիրը կապւած չեն և ամբողջ հասւածն անձաշակ և անհմատ է զուրա զալիս:

Ակողիսի անձդութիւններ պատահում են շատ աեղերում: Մենք կը բաւականանանք մէջ բերելավ մի երկու հատ եօ, որնք խոնդարաւմ կամ անհասկանալի են դարձնում իմաստը:

Եղիշէն դրամ է. «Հաճու թէքր բանն առաջի թագաւորին և ամենայն մեծամեծացն, մանաւանդ որ էին առ աջակաց ու օրինացն, Խորհուրդի մէջ առեալ՝ լաղթէր խրատնո (երես 24):

Պր. Դոմիասեանց թարգմանել է. «Եսաս հաւասեցին ալի խոռքը թէ թագաւորը թէ ամենայն մեծամեծ-

ները, մանաւանդ ներկաւ և զող կրօնականները. մէջները խորհուրդ արին՝ և ալս խրատը և ազթեցու Նրկու խոշոր սխալ կակ ալս խօսքամ. նախ առաջակաւ և զող օրինացն չէ նշանակում ներկաւ և զող կրօնականները (և քերականօրէն և չէ կարող նշանակել), ալ կրօնի առաջնորդն երը ապինքն մոգպետները:

Խակ երկրարդ սխալը, որ առաջ է եկել խրատ բաւան աշխարհաբարի նշանակութեամբ հասկանալիւց՝ բալրավին աղաւազում է միտքը և անհասկանալի է գարձնում վստագու դէպքերը:

Խրատ բառը ընաիր մատենալիրների մէջ մնձ մասամբ նշանակում է պատիժ, հարւած, չարշանք, և ալս նշանակութեամբ դործ է ածել և նզիչն:

Թագուարն աւ մնծամեծները խարհուրդ են անօմի, թէ ինչպէս իրագործեն մոգերի ասաջարիսւթիւնը, ապինքն կրակտպաշտութեան գարձնեն քրիստոնեաններին, և վճառմ են խռասութիւն գործ զնել. (որովհետեւ միւս բալր միջացներն արգէն փարձել էին տպարդիւն կերպավ): Եւ Վիրաւի ալս վճախ անմիջապէս մոտակ սկսում են չարչարանքները, որոնց նկարագրաթեան նվիրաւ են նզիչէի լաջորդ երիսները. Ուրեմն վերակիշնալ հաւասածը պէտք է թարգմանէր, և լու խօսքին հաւասածնեցան թագուարն ու բալրը մնծամեծները, մանաւանդ նսցակ բօնի առաջնորդները. Խօրհուրդ անելավ՝ աւելի լարմար դատան խռատութիւնն ու պատահ էր նզիչն երը:

Դննչապուշ Հայաստան գալսկ, ասում է նզիչն, «զազատութիւն եկեղեցւ արկանէր ի ծառաւթիւն տակ դրաւ» (Երես 29), որ պահպատահանցը բառացի թարգմանել է մեկեղեցւ աղաստութիւնը ծառաւթիւն տակ դրաւ» (Երես 33). Գևորգ կարծում, որ կարգացողը դրանից հասկանալի, թէ իսկապէս ինչ է արել Դննչապուշ, թարգմանիչը նզիչի գործածութիւն և ծառաւթիւն բառերը պահել է անփոխիս, սական զոքա փոխել են իրանց նշանակութիւնը. Ա. դարսում աղատա (իրաւաբանական տեսակէտից) կոչում էր աղնւական դասակարգը, որ աղաստ էր հարկից, իսկ ծառաւթակ հասած բակ ժագավորութիւնը, որ հարկ էր վճարաւութեամբ նկանին վշեալ հաստածը նշանակում է, թէ Դննչապուշ հարկ դրեց եկեղեցու. (եկեղեցական պաշտօնեաների և կալանակից) վերակ, որ առաջ աղաստ էր հարկից. Մենք ալժմ կը հասկանանք՝ որ տատիճան պէտք է ոսք դրամէր ոսքութիւնը ժարգութիւնը. Անց նոխարարները Յաղկերափ տաւշ են վշամ են ալս մնձ տրանսութեան բանարարումը. Անտ և ի տուրք եկեղեցակն, որ էր աղատ ի Քրիստոս ըստ կարգի նախնեցն մերոց ի մկրտանէ, և զաւ ընդ հարկ ու եղիբո. (Երես 63):

Պարտից նամակը նզիչի մէջ սկսում է ալս բառերով.

«Միհրներսեն վզութեակ, հը ամոն առար նրան և Աներան, Հայոց մնծաց սղջոն շատ» (Եր. 31), որ թարգմանիչը ապու-առ-առար բառ, սկսութեան է տրատղմալ. բայց պարզ է, որ զարս զանէ տառին հինգ

բառը — ծալքէ ի ծալք հին պարակերէն լեզով — հասկանալի չին լինիլ ավժմ հաւ ընթերցաղներին, նղիշէն եթէ զորդածել է աղդ և դորս նման աւրիշ պարակերէն պաշտօնական խօսքեր նորա ժամանակակիցները կը հասկանալին աղդ, ինչպէս մենք ավժմ հասկանում ենք՝ երբ հափրէն լեզով կարում ենք — ֆինանսների մինիստր, գեներալ-մայոր և ացն — թիշտալ խօսքը, որ Միհրներանի տիտղոսն է՝ հալոց պատոսիանում ճիշդ թարգմանութեամբ դրած է «Միհրներանի մեծի (վզուրի) հաղարապեալիդ» (Հրամանատար, կամ հրամատար) Արեւոց և Անարեաց»:

Նղիշէն ասում է, թէ Յաղիկերս հրովարտակով Հալոց նախարարներին Պարակաստան իւր մօտ կանչեց, բերուած է 10 նախարարի անուն և վետով շարունակում է.

«Զալպ նախարարքս լականէ լանուանէ կոչեցին ի դուռն. և կէսքն առ նմա ի սկ էին ի կարաւանին, և աղքն ի կողմանց հիւախաղ ի լունաց պահակին. թողեալ էր զոման և ի նախարարացն արդէն լաշխարին Հալոց» (Եր. 58—9):

Թարգմանիչը գրում է. «Ալլու նախարարներին ահա անուն անուն կանչեցին թագաւորի դուռն: Սոցան ի ցոմանք հէնց աւնաեղ էին զորքի մէջ. ոմանք էլ հիւախալին կողմերում Հոնաց պահակի մէջ էին, իսկ միաները թողնուած էին Հալոց աշխարհում» (Երես 57):

Թողնելով պատեղ մանր անձուութիւնները՝ մի քանի անհնթեթութեան ենք հանդիպում. դուրս է զալպս նախ, որ Յաղիկերտ հրավարատ-

կով իւր մօտ է կտնչում արդէն իսկ իւր մօտ եղած մի քոնի նախարարներին. երկրարդ, (ինչուս գրած է շարամակութեան մէջ) «ամեն մէկն իւր աեղից», ալսինքն որը Հանաց աշխարհից, որ Յաղիկերտի մօտից, որն էլ Հակասաւանից՝ գնում են Յաղիկերտի մօտ՝ «Յովակի մած և այլսկի մած եւ այլսկովուածի մեռք միենանք ուվատի վերակ հաստատած»: Երրորդ՝ նախարարների թիւը գոնէ նոցանը, որոնք Հալուտանում էին միացել՝ խիստ նւազում է՝ 2—3 մարդի չափ և ազն: Պարզ է, Յաղիկերտ այդ տասն նախարարները կանչում է Հալուտանից — սոքա էին այն ամանքն, որոնցից թողել էին հաղմնիքում, և որոնց վականէ անաւնէ: ճանաչուած էր թականէ անաւնէ: ճանաչուած էր թականէ անաւնէ: իսկ միանդի կանչուած էր թաղաւորը: իսկ միւս հայ նախարարներից կէսն արդէն իւր զուած էին կամաւանում էին Պարակաստանում, ուրեմն կանչել հարկ չը կար, մի մասն էլ գտնուած էր Հանաց պահակամ:

Նղիշէն պատուամ է, թէ ինչպէս մողպեար Հակասաւանում Պանդ երեցից փաւաւոր ծեծ ատելսաց լիսու Վասակին գանդատում է եղածի վերակ և հակերին կրակապաշտ զարձնելուց լուսահատուած՝ ասում է ի միջի ալլոց.

«Զի թէ էին զօրք աշխարհ և մողքը ոչ ինչ խնակէին սոքա ի նոսասահակմարը» (Եր. 83), որ պ. Ղոկասեան թարգմանել է՝

«Եթէ մեր աշխարհի զօրքերն անգամ մողեր գառնապին, սոքա — (աղքնքն համերը) չին խնակիլ նոցա էլ սատակիցնելու» (Եր. 77): Դուրս է գալիս, որ մողպեար մի շատ անմիտ բան է ասում. վիրափ հափրն

ինչն պիտի ինաէ է ին կստորել մողերին, եթէ պարախց զօրքերն անզամ մողեր դառնապին. կարելի է կարծել թէ աւելի մեծ ախսրժակով կը կոտորէին, որովհետև մի հարւածով թէ մոգ և թէ զինաւր պահանած կը լինէին, թարգմանիշը սխալել է մոգ բառից, կարծելով թէ զա դործ է ածում միտան կրօնի պաշտօնեաների համար միտան, և աշխարհից բառի ։ Յոդը աշխարհաբարի նշանակութեամբ է վերցրել որից դուրս է եկել վշեալ անտեղութիւնը. Մինչդեռ մողակների խօսքը պարզ է. եթէ ալս աշխարհի (ապինքն Հապաստանի, որտեղ ինքը գանձում էր խօսելիս) զօրքերն անզամ մոգ (կրակառաշատ) լինէին սոքա (հափերը կամ հոգերականները) նոցա էլ չէին ինավ ու կը կոտորէին. Մողակնու բարենում է իւր կարծիքը, թէ հաւքը ակնքան ջերմուանդ են քրիստոնէութեան մէջ, որ մինչն իսկ իւրաց պահանող զօրքերին էլ կը կոտորէին, եթէ սոքա հաւաստափոխ լինէին. ուր մնաց թէ Պարտկաստանից և կած օտարացիդ զօրքերին և մողերին.

Նոյն մողակնու լանդիմանում է Վասակին, որ սոս դիմանալով հանդերձ հափերի ջերմուանդութիւնը՝ չէ զդուշացրել թագաւորին և պարտազանց է գտնել. լիսու ասում է աջի նաև ժամանակուն էիր՝ և ևս զիտէի. զաւ ոչ իմաստուն էիր՝ և ևս զիտէի. Ապա թէ ոչ լալու է եթէ և զու ի նոցա բանի եսո (երես 88), որ աշխարհաբար թարգմանած է ախտիս. «Ուրիշ ժամանակ միշտ իմաստուն էիր, զիտեմ, բայց աւսորդն զը դործեցիր» Յագ-

նի է, որ դու էլ նոցա հետ խօսք մէկ ես արելո (երես 81). Մողակնու խօսքն անկապ և անհմատու է զուրու զալիս, որովհետև ամենին պարզ չէ, թէ որուելից նա մակարերում է Վասակի գաւառանութիւնը պարախց գէմ. նոտ առաջ մողադրում է Վասակին, որ անխելք է վարել, զգուշութիւն գործ չէ դրել. և լիսու լանկարծ՝ ուխտազանցութիւն. Բնագրի մէջ մողակնու շատ խելացի երկսաբրաբանութիւն է անում. —կամ, ասում է, զու անխելք ես, կամ (ապա թէ ոչ), որ չէ թարգմանել որ. Վուկտուանցը) ուխտադրութ ես.

Յազկնրտ, նախարարների կեղծուրացութեան վերակ ուրախացած նոցա Հալաստան է ուղարկում, որ աշխարհը կրակապաշտ գարմանեն, պազում ալբումի գումարէր ընդ նոտա, և ի մողացն ոչ սակաւս, ամելի քան գեւթն հարիւր վարդ ապետու զէր ընդ նոտա (երես 71). Պր. Վուկտուան ալբումը թարգմանել է. աշատ ալբումի գումարնց, բազմաթիւ մոգեր և եօթն հարիւր ից աւելի ուսուցիչներ էլ են ունեցել. որոնցից 700 հոգի էլ Հալաստան են ուղարկել, Բայց մատենազիրը բոլորին ուրիշ բան է ասում—որազմաթիւ հեծելազօր գումարեց նոցա հետո, նոյնպէս և ոչ սակաւ մողեր, ամելի քան եօթն հարիւր մարդ, ուղարկեց նոցա հետ իրեւ ուսուցիչ, ուրիշն ապ 700 մարդը նոյն մողերն էին, որոնք դալիս էին Հալաստան՝ մողական կրօնը սովորեցնելու

Օրինակներ կարելի էր գեւ շտարերել. բայց ավագանն էլ, կարծենք, բաւական է ապացուցանելու համար, թէ գրաբարի և մատենադրի ոչ լիովին ուստիմասիրութեան պատճառամվ, որչափ որ ավեմ կարելի է — թարգմանութեան մէջ լաճախ պատճառամ ևն անտրամաբան, անհասկանալի և հակասական մտքերու

Դառնանք ուրիշ կէտի, թէ որչափ լաջող է թարգմանուած զիրքն ընդհանրապէս, մի կողմ թաղնելով վերսպիշեալ և նոցա նման անձշութիւններ ու սիսալները, արդեօք ամի կողմից թարգմանութիւնն համապատասխանում է ընագրին, արապառամ է նորա գեղեցկութիւնը, կորսվը, նրբութիւնը

Այս հարցմունքին պատասխանեն ամէլի գժւար է, քան անձիչդ թարգմանութեան օրինակներ բերելը. Մի կողմից լապսնի է գրաբարի անհամմատ հարաստութիւնը և ամը գեղեցիացնելու և նրբացնելու բազմաթիւ միջոցները, որոնցից ավեմնան զրտկանական լեզուն բոլորովին կոմ մասամբ գուրքի է. աւտի և անկարելի, աշխարհաբար թարգմանու Միւնից պահանջնել ան ուժը, նրբութիւնն ու գեղեցկութիւնը, որ ունի զարբար, այն էլ Եղիշէի նման ճարտարախօս մատենագրի ընապիրը, ոմէ էլ որ լինի թարգմանիչը. Միւա կողմից՝ որտիւնն մարգմանիչը նպատակ է սննեցնել ընթերցող հասարակութեան և ուսանող դասին» բաւականացները բնագ-

թարգմանութեան լեզուն ամէլի ևս կը ծանրանար և զժւարամատչելի կը լինէր ընթերցող հասարակութեան, Վերջապէս պէտք է ինկատի ունենալ և անհաստական ճաշակը, որի գուռութիւնը և իրաւոնքը չէ կարելի ուրանալ. Խոկ անհաստական ճաշակը բաց է անուած կամազականութեան գուռը, որ և ուրեմն անխուսափելի երկութ է ամեն մի թարգմանութեան մէջ. Այս պատճառով թէն կարելի է մուր քննած զրբից հարիւրաւոր օրինակներ բերել, որանդ թարգմանութիւնն առար է ընաղրից գեղեցկութեամբ, որը պատճեամբ և կորսվով բաց ամեն անզամ չնք կարող մեղաղրել թարգմանչին. Միւան իրաւոնք ունենք մնղաղրելու նրան, որ նա շատ անզամ, առանց հարկի, հեռացել է ընաղրից, ամեցրել է բառեր և նախաղաստութիւններ, որոնք ոչ միանչ չեն ծառալում խմասութ պարզելու, այլ ընդհակառակը հակասում են հեղինակի ոճին և մատարութեան, լաճախ դուրս է խողել խօսքեր, որմնք երբեմն շատ կարեոր են.

Ալազիալի օրինակներ բաւականաչափ մէջ է ըմբռել պ. Մ. Ղազարեանի ԱՄուրանի անցեալ տարւակ նույնը բերի զրբում. մուր կողմից ամւացնուած ննք նոցա վերաէ մի քանի՛ հատ ևս

«Գործը գլուխ բերելու ժամանակը վեցերարդ ամիսը որոշեցին» (Երմա 68).

Նօտրագրած բառերը թարգմանչի ամեցրածներն են, և շատ կասկածելի չեն նոցա ճշգութիւնը. ամէլի հաւանական է կարծել թէ պարափկները վեցերարդ ամիսը որոշել են

դործն ոկսելու համար, որ միտուառն մէջ պիտի վերջանար (որ նաւասարդէ մինչև ի նաւասարդո), Ազագիսի կասկածելի, մինչև իսկ սխալ լաւըլած բնագրի մէջ անելն անկարելի է:

«Ամբաստանութիւն վեր կացրեց մեր ոշխարհի հազարապետի՝ Վահան Ամառունու գէմ» (Երև. 33).

«Ազատամբեց Ազուանից Նաչէ թաղաւորն եսո» (Երև. 251).

Ենթադրենք, որ ազդ հազարապետը Վահան Ամառունին էր և ազդթագաւորը՝ Վահէն. բայց թարգմանիչն ազդ անունները պէտք է դնէր ծանօթաթեան մէջ և ոչ բնագրի. Եղիշէն ազդ անունն չէ տալիս և թարգմանիչն իրաւունք չունի նորան ասել տալ՝ ինչ որ նա չէ կամեցել ասել անր տեսան որ անուամնափնիւ չը կարողացան ձանձրացնել մեզ (Երև. 34). Եղիշէն առաջին դէմքն գործածում է միան ինքն իւր մասին և ոչ նաև ժողովրդի կամ նախարարների կողմից. Թարգմանչի ամեցրած մեզ բառն ուրեմն սխալ է կամ հեղինակի ոճի տեսակէտից կամ իմաստով:

«Իմացած լինիք, որ ապամենն ասածներս կը կատարեմ» (Եր. 63). Բոլորովին ամելորդ լաւըլած,

«Թէպէտ մենք հրաման չունենք բամբասելու մեր իշխանինս. Նոխագէս զուր և սխալ աւելադրութիւն Մեր բառը չէր կարող գործածել Եղիշէն, որովհետև ազդ իշխանը (Յաղկերո) Եղիշէի իշխանը չէր, և արդէն մեռած էր, երբ նա զրում էր իւր պատմութիւնը Բնագրին ունի ովլիշխաննու—աչն իշխանին, —որ անհամնամատ

լաւ է քան մեն ի իշխանինս Մենք կարծում ենք սական, որ ապամեզնագիրը խանգարւած պէտք է լինի, և զիշխանն ձեմի փոխանակ պէտք է լինի ովլիշխանու (Զիշխանս ժողովրդան քո մի անարգեսցեա). և այս դէպքում մասնենագրի խօսքը մի նոր նշանակութիւն է առանում. «Թէպէտ մենք հրաման չենք առացել, իրաւունք չունենք իշխաններին բամբամելու բացց...».

«Իրանց գերեզմանները կարծես իրանք էին փորսմա (Եր. 88). Աւելացրած բառը զարձեալ հակառակ է մասնենագրի ասածին. նա պարզապէս ասում է պիւրաքանչիւր զերմանս ինքեանք փորչինու—ամեն մէկն իւր ձեռքով փորսմ էր իւր գերեզմանը Փոխանակ նւազեցնելու և կապածի ենթարկելու մեր նախնեաց առաքինութիւնը՝ լաւ է ամբողջապէս ըմբռնենք և հասկանանք այն, Դորան մենք շատ պէտք ունենք:

«Իրպեցոց զբաղումս ի սուրբ ուխտէն քրիստոնէից, էր զոր բանիւք սպառնալեօք, էր զոր կապանօք և տանջանօք և էր զոր չարաչար մանւամբ վախճանէր» (Եր. 8). Նօտրագրած բառերը զուրա են թողած թարգմանութեան մէջ,

«Ազագիսի իմն եկեալ հասեալ է վախճան տէրութեանն. եթէ հարկանին չը զգան, և եթէ հարկանեն չիմանան» (Երև. 8—9). Թարգմանւած է աՄի ապագիսի կերպով և կել հասել է ազդ տէրութեան վախճանը. ոչ ջարդելու են զգում, ոչ ջարդելը (Եր. 16). Աւելի կենգանի, և որ զիշխատը է բնագրին համաստիմ կը լինէրթարգմանել՝ աչնց պապիսի մի վախճան է

մեկը հասել ազդ տէրութեանը. եթէ աշխարհում տասն հազար հեծելազօր զարկում են՝ չեն զգում, եթէ զարկում են՝ չեն հասկանում».

«Հարվարասակ ուղարկիր գոտուն, որ Ազուանից աշխարհում գանւած այրումին Հալաստան՝ գալ ձմերելու» (եր. 82). Դուքս է ձգուծ ապրուժի քանակութիւնը—ասան հազար, որ առելորդ մանրամասնութիւնն չէ հասկանալու համար Աստանեանների զինուրական ոքքը և մակարերելու համար, թէ որչափ պարախկ զօրքը պէտք է զանւէին Վարասանում ու Հալաստանում, երբ Ազուանքում, ազդ փոքր

աշխարհում տասն հազար հեծելազօր էր գոտում».

Եմքն ապացոց, թէ կարմիր էր համեմատարար ամելի հաստարիմ մնալ բնազրին, և նորա մանը նրբաթիւներն արտակարութ իտքը ի շատէ առանց վնասնելու աշխարհաբարի պարզութեան՝ թարգմանում ենք բնագրից մի փոքրիկ հատուած և դէմք դնում ենք համեմատութեան համար Պ. Վուկանեանցի թարգմանութիւնը. Մենք չենք տարակուում, թէ ապատուածը կարմիր է ամելի լաջող և բնագրին ամելի մօտիկ թարգմանել.

«Արշակունեաց ցեղի վերանալուց հետոլ մեր Հալոց աշխարհին տիրեց պարախկ Աստանի ցեղը, որ իւր իշխանութիւնը վարում էր մոգական կրօնով և շատ անդամ կրօնում էր նոցա հետ, որոնք այդ կրօնը չին բնդուում. սկսելով Տիրանի որդու Արշակ թագաւորի ժամանակից շարունակում էր այս կուիւր մինչև Վուանցապունի որդու Հալոց Արտաշէս թագաւորի վեցերարդ տարին. Աւ երբ որան նս թագաւորութիւնից հեռացրեց՝ հազ նախարարներին մնաց թագաւորութիւնը. որովհետեւ թէ պէտք զանձը (հարկը) պարախց արքունիքն էր զնում բալց հալոց ամբողջ հեծելազօրքը պատերազմում առաջնորդում էր նախարարների ձեռքով. Ապա պատճառով ասուածպաշտութիւնը Հալաստանում պատճառանում էր արձակ-համարձակ, Շապուն արքալից արքալի իշխանութեան սկզբից մինչև Վուանցի որդու Յազկերտ արքալից արքալից արքալի երկրորդ տարին, որին սատանան իրան զործակից գտաւ և իւր

«Արշակունեաց ազգի թագաւորութիւնը վերջանալուց վետով մեր հալոց աշխարհին տիրեց պարախկ Աստանի ազգն, որ իւր իշխանութիւնն կառավարում էր մոգերի օրէնքով և շատ անդամ կուիւր էր տալիս նոցա հետ, որոնք չին մտնում նոյն օրէնքների տակ. ալսովէս կուռում էր Տիրանի որդի Արշակի օրմբից սկսած մինչև Վուանցապունի որդու հալոց Արտաշէս թագաւորի վեցերարդ տարին. Աւ երբ տարան էլ թագաւորութիւնից զրկեցին, այն ժամանակ թագաւորութիւնն ընկաւ հալոց նախարարների ձեռքն, որովհետեւ թէ պէտք հարձարարների ձեռքովն էր առաջնորդում պատերազմի ժամանակ. Արտաշտճառով էլ ասուածպաշտութիւնն ազատ համարձակ կատարուում էր հալոց աշխարհում՝ արքալից արքալ Շապունի օրմբից սկսած մինչև Վուանցի որդի արքալ Յազկերտից երկրորդ տարին, որին

հաւաքած բոլոր թուները գուրս թափեց և նրան լցրեց, ինչպէս մի կապարճ թունաւորած նետերով, Աւ բարձր արժանաւոր կապարճ (թագաւորն) սկսեց անօրէնութեամբ և ողջիւները շարժել փրտում էր և կռմելով փոշի էր բարձրացնում աշխարհի չորս կողմը, Քրիստոսի հաւատացողներա՝ իրան թշնամի և հակառակորդ էր երեցնո մ և նեղուամ, տաճուում էր անխաղաղասէր կեանքով.

Որովհետեւ նորան շատ սիրելի էին խոռովութիւնն ու արիւնեղութիւնը՝ ուստի ինքն իւր մէջ տարուգերուում էր, թէ որտեղ դուրս թափեմ իւր զառն թոներս, կամ որտեղ հանդէս հանեմ նետերիս բարձրութիւնը, Աւ սաստիկ վիմարութիւնից կատաղի գաղանի նման լարձակեց լունաց աշխարին վերաբ:

սատանան իրան գործակից շինեց, բոլոր հաւաքած թոնը թափեց նորա մէջ¹⁾ և լցրեց նորան ինչպէս մի արժանաւոր կապարճ²⁾ թունաւորած նետերով. Ակասաւ գոռողանալ, անօրինութեամբ եղջիւրահարում էր և զոռալով³⁾ հող էր հանում դէպի երկրի չորս կողմերը. աճպէս էր ցուց տալիս, իրը թէ մնաք Քրիստոսին հաւատացողներա, թշնամի ու հակառակորդ ենք իրան, և նեղանում տրարուում էր անխաղաղասէր կեանքով.

Աւ ըստ որուում նորա համար շատ սիրելի բաներ էին խոռովութիւնն ու արիւնեղութիւնն՝ ալս պատճառով ինքն իրան մոտաւանջւուում էր, թէ ում վերակ թափէ արդեօք դառն թոնը, կամ ում վերակ արձակէ⁴⁾

1) «Թ ա փ ե ա ց է ը ս ց չ է կ ա ր ո ց ն շ ա ն ա կ ե լ թ ա փ ե ց ն ո ր ա մ ջ ն , ա յ լ թ է ի ն չ ո ր ա ռ ա ջ կ ա ւ ա ք ե լ պ ա կ ե լ է ր ՝ ա յ ժ մ գ ո ւ զ ու կ ա ն ե ց ։

2) «Պ ա տ կ ։ ն դ ա ր ա ն ։ պ ա ր ս կ ե ր է ն ը ա ր դ ը ա ռ ։ է ։ ն ե ն ե ր է ր ի պ ա կ ա ր ա ն ։ ո ւ ր ե մ ն չ է կ ա ր ո ց թ ա ր զ մ ա ն ե ւ ե լ ։ ա բ ժ ա ն ա ւ ո ւ ր կ ա պ ա ր ք ։

3) «Դ ո ս ա լ ո վ գ գ ժ ։ ա ը է փ ո շ ի բ ա ր ձ բ ա ց ն ե ր ։ գ ր ա բ ա ր գ ո ւ ո ւ լ ն շ ա ն ա կ ա մ է ։ է ն ա կ ։ կ ո ւ ե լ ։ կ ո ւ է պ ա տ ք ս տ ե լ ։ Ա յ ս ե զ յ ա տ ե ն ա գ ի ը ը ն ա զ կ ե ր ։ ը ն ա զ կ ե ր ։ ն մ ա ն ե ց ն ո ւ ո ւ մ է ։ կ ա տ ա զ ա ծ ց ո ւ լ ի ։ ո ր ե ղ ջ ի ւ ը ն ե ր ը վ ը ն ո ւ ո ւ մ է կ ո ւ ե լ ։ կ ա մ ա զ ։ փ ե ւ ո ւ մ է ։ գ ո ս ո ւ զ ա ն ա յ ր ։ և ս մ ը կ ե ն ե ր ո վ գ ե տ ի ն ը ծ ե ն ե լ ո վ ։ փ ո շ ի է բ ա ր ձ բ ա ց ն ո ւ ո ւ մ ։ զ ո ւ ա լ ո վ կ ո ւ զ ։ Պ ։ Ն ո ւ կ ա ս ե ա ն ց ի ։ Ժ ա ր զ մ ա ն ո ւ թ ի ւ ն ի ց չ ։ կ ա ս կ ա ց ո ւ մ մ ա տ ե ն ա գ ի ։ ա յ ն մ ա ն ա բ ա ն ո ւ թ ի ւ ն ը ։ Մ ե ր գ ը ա ծ ։ կ ո ւ ե լ ո վ ։ ը ա ռ ա ն է ։ ա ն յ ա ջ ո զ է ։

4) «Ո ւ ը ը ա ց ա ս ր ե ց ի ց ։ խ ո ս ք չ է կ ա ր ո ց ն շ ա ն ա կ ե լ ։ ո ւ մ վ ե ր ա յ ա բ ձ ա կ է ։

թաղմաթիւն նետերը և աղնչափ շատ
լիմարացաւ, որ կասաղի դազանի
նման էարձակուցաւ լուսաց երկրի
վերաբաւ

(Պուկասեանց, եր. 13--14)։

Ապս երկու թարգմանութեան մէջ, մի կողմ թողնելով պ. Ղուկասեանցի թարգմանութեան ալն տեղիրը, որտեղ ճիշդ չեն՝ մնացած տարբերութիւններն ինքն ըստ ինքեան մնաներ չեն. բայց դոքա նշանակութիւն ունին. Որովհեան եթէ բնագրին հնարաւոր եղածին չափ հաւասարիմ լինելը որ և է թարգմանութեան զըլիւաւոր արժանաւորութիւնն է՝ դա անհրաժեշտ պարման է զառնում՝ երբ թարգմանում է մի դասական (ըլաքսիզու) մատենագիր։ Սոցա լեզվի մաքրութիւնը, ոճի գեղեցկութիւնը, մոռքերի վսեմութիւնը իդէալներ են, որոց ձգտում են հասնել ալժման դրագէաները. Եւ եթէ ալս կարիքն զգացում է ան լուսաւորած ազգերին մէջ, որտեղ պարծենում են իրանց ներկայ վառաւոր դրականութեամբ, կանոնաւոր լեզով ու մշակւած, զիկած ոճով որչափ ամելի կարմոր է դա մնզ համար, որ դժբախաս ժամանակակիցներ ենք լեզվի բարելոննեան խառնակութեան, որ արհամարհում ենք ոճը, որ եթէ մտածում ենք ինչ միտք արտավախուլու մասին՝ երբէք չենք հոգում, թէ ինչ կերպ ով արտավախունք ալլ միտքը, — կը հասկանան — ալդ բաւական է մնզ համար, իսկ մի դիրք, որ իւր հետաքրքրական բովանդակութեան պատճառով ծալըէ ի ծալը ազահարար պիտի կարդացուի ընթերցողնե-

րից՝ անշուշտ զգալի շափով օգտակար ազդեցութիւն կունենալ նոցա լեզվի ու ոճի վրան, եթէ նորա ոճն ու լեզուն մի-երկու աստիճանով բարձր լինեն. Ալս պատճառով վերոպիշեալ մանր տարբերութիւնները մի երեսի մէջ ամբողջ գրքում ստուարանում են և մնան նշանակութիւն են սաանուու գեղարւեստական լեզվի ու ոճի անսկէտից։

Որովհնասն խօսքը լեզվն եկաւ չենք կարող ուշադրութիւն չը դարձնել պ. Ղուկասանցի գործածած քերականական մի ձեի վերան, որ խիստ անախործ սպասարութիւն է թողնուած խօսքս ալն ն զրի մատին է, որ թարգմանիչը զործ է ածում միավանկ բառերի լոգնակի և բ վերջաւորութիւնից առաջ, փախանակ զործածելու մեր, ձեր, ի բանց զերանունը — մէջն երն առան (իրանց մէջն կատ մէջներն առան), շատ կոտրմէլ ելն մտքն երումը (իրանց մաքսամ, մոռքերում), ձայնն երը բարձրացրին (իրանց ձալնը, կամ ձալները) և ալլն. Ալս աստիպութիւնն ունի արևմտեան լեզուն, միան ալս տարբերութեամբ, որ ն-ի անդ զործածածում է նի-ո, նի-դ, նի-ն որ դրտում է միավանկ բառերի և զակակի ուղղականի վերջը — մոռքեր-նին, ձալներ-նին, բա-

թացարել կամ բացազէլ եշանակում է գուշը գնել, գուրս հանել, հանել, հանել, այնպէս և՛ գէն դնել, հեռացնել

դաքաւորնիս, թագաւորնիս, ձեռքեր-նէս, մաքերնէզ, թալց մեր արևելան դրական լիզում դա անհարատակալաթմար է, որովհետև բազմավանկ բառերի վերալ, որոնք մեր լիզում անհամաստ չառ են միավանկներից՝ չէ կարելի արդ գործածել չն երարդ դէմքի համար ես—մէջն երս առանք, մտքն երդ դրիք կանոնաւոր չէ, որովհետև երրորդ դէմքին լողը չէ կարող դրական բառի արմատի և չէ կարող դրական մասի մէջ, այլ միան հոլովական մասի մէջ, մի-վերջը՝ Ալգախի գործածութիւնը միավան մի համեստնանք կունենալ—միավանկ բառերի լոգնակին էլ ն եր մասնիկով կազմել որ առնենին ցանկալի չէ, ի նկատի ունենալով մեր լիզի մէջ բաղաձանեների կուսականքին նոցա թիւը արեսական կերպով, ինչոր երեսակալական նրբութեան համարու

Բացի պ. Մ. Դագարիսանի նկատած լեզւակին պակասութիւններից, որոնց մենք համաձայն ենք՝ ուրիշ շատ նկատելու արժանի կէտեր կան պ. Դուկասեանի թարգմանութեան լիզի մէջ, թալց լոցա մասին մենք ասիթ կունենանք խօսելու ուրիշ աել, մանաւանդ որ ալ լոգածը մեր կարծածից աւելի երկարացաւ

Մինչև ակմէ մեր ասածներից երեսամ է, դոնէ մենք ակապէս համոզած ենք, որ պ. Դուկասեանցի

թարգմանութիւնը գոհացուցիչ չէ ոչ իմաստի ձշումիւան և ոչ լիզի ու ո՞ի կողմից, Մենք իրաւունք ունէինք բաւարարութեան կամ գալու, որ պ. Դուկասեանցի նման փարձաւծ աշխատաւորի ձեռքից ելած թարգմանութիւնն անթերի ու անպարաւ կը լինի, որ նորա մէջ մինչ իսկ ուղղած կը լինին Նղիչէի բնադրում (գրարարում) սպրուծ մի քանի աղաւաղութիւնները, որոնք մինչի ակմէ թուղաւծ են անուշաղիրունա ալս լուսը չէ արդարանում ներկաւ թարգմանութեամբ:

Սակայն անիրաւութիւն արած կը լինէինք եթէ սորանով վերջացնէինք մեր խօսքը: Մենք բոլոր մամանակ քննում էինք զիրքն ան տեսակէտից, թէ նոչ կարելի էր անել. իսկ երբ եղածը կարգում ենք առանց ընազրի հնու համեմատութեան, առանց մանրակրկիտ քննութեան՝ ընդհանրապէս գոհացուցիչ սպաւուրութիւն ենք սոտանում. իսկ համեմատելով նրան մեր գրականութեան հրապարակում երեցող միւս գրածքներին նեա՛ զանուամ ենք նուն իսկ չառ լաւ, չորհակալութեան արժանի գործ, թէ նիւթի ընտրաւթեան և թէ կատարաւմի կազմից, որի ընթերցումը ցանկալի և օգտակար ենք համարում հասարակութեան համար:

Ի դէպի կարմոր է ուղղել 222-րդ երեսամ պատահած սպագրական խոշոր սիսալը--Աքո պատեր բազմակի ցարպիկանց ուղում ես կոտորելու. պէտք է լինի՝ պատեր բազմակի ց.

Ար. Մովսեսունաց,